ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/11

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/270-2021 գրությամբ «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության (հետայսու՝ Պատվիրատու) 09.01.2021թ. թիվ 3/27/59269-20 գրության հիման վրա 14.01.2021թ. թիվ 26/26-1/270-2021 գրությամբ նախաձեռնել է «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ալեքսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Ալեքսիմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/11 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.01.2021թ. թիվ 3/27/59269-20 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ ուղարկվում է ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Ալեքսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը, 09.12.2020թ-ին կնքված պայմանագիրը և 21.12.2020թ. կնքված համաձայնագիրը, պատասխանատու ստորաբաժանման կողմից 27.12.2020թ. ստացված բացասական եզրակացությունը և պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/11 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի միջև 09.12.2020թ. կնքվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ» ծածկագրով գրավոր թարգմանության ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ «Ալեքսիմ» ՍՊԸ-ն ստանձնել է գրավոր թարգմանության ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը

կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օր հետո 7 օրյա ժամկետում, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.:

4. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև 21.12.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որը, համաձայն համաձայնագրի 1.2-րդ կետի, ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

5. «Ալեքսիմ» ՍՊԸ-ին ուղղված 29.12.2020թ. թիվ 27/1459 գրությամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը. «09.12.2020թ. կնքված պայմանագրի և 21.12.2020թ. կնքված ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագրի շրջանակում կատարողը 2020 թվականի դեկտեմբերի 21-ին ներկայացրել է գրավոր թարգմանչական նյութեր, սակայն գնման հայտը նախագծած ստորաբաժանման կողմից տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու տեսական թննության հարցերի թարգմանությունները զննելուց հետո պարզվել է, որ այն չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին, քանի որ այն չի կատարվել մասնագիտական (տեխնիկական) տերմինաբանությամբ, պարունակել է բովանդակային մի շարք թերություններ: «Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից հայցվել է մեկ հավելյալ օր թերությունները շտկելու համար և 22.12.2020թ. ներկայացվել է վերջնական շտկված տարբերակը: Վերջնական շտկված տարբերակի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թարգմանչական նյութերը պարունակում են վերը նշված բովանդակության համանման սխալներ, որի մասին տեղեկացվել է կատարողին:

Մինչ օրս կատարողի կողմից ճանապարհային ոստիկանություն չի ներկայացվել գրավոր թարգմանչական նյութեր՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի համապատասխան և ընդունման-հանձման ակտը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 2.1.2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի միջև 09.12.2020թ. կնքված Պայմանագիրը»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/270-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 09.01.2021թ. թիվ 3/27/59269-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Պայմանագրի 3-րդ կետով նախատեսվել է ծառայության հանձնման և ընդունման կարգը, որի 3.1-րդ, 3.2-րդ, 3.3-րդ և 3.4-րդ ենթակետերի համաձայն՝

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: **<u>Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:</u>**

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը

ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Այսպիսով՝ Պայմանագրի առանձին կետով նախատեսվել է ծառայության հանձնման-ընդունման կարգը, որտեղ հստակ նկարագրվում են այն գործողությունները, որոնք իրականացվում են կատարողի կողմից ծառայության մատուցման և պատվիրատուի կողմից ծառայության ընդունման կամ մերժման փաստը հավաստելու համար, որն էլ իր հերթին ենթադրում է պայմանագրի կատարման ընթացքը:

ՀՀ ոստիկանության և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Կողմեր) միջև 09.12.2020թ. կնքվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ» ծածկագրով գրավոր թարգմանության ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ «Ալեքսիմ» ՍՊԸ-ն ստանձնել է գրավոր թարգմանության ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1

հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օր հետո 7 օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.:

Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև 21.12.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որը, համաձայն համաձայնագրի 1.2 կետի, ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

«Ալեքսիմ» ՍՊԸ-ին ուղղված 29.12.2020թ. թիվ 27/1459 գրությամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը. «09.12.2020թ. կնքված պայմանագրի և 21.12.2020թ. կնքված ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագրի շրջանակում կատարողը 2020 թվականի դեկտեմբերի 21-ին ներկայացրել է գրավոր թարգմանչական նյութեր, սակայն գնման հայտը նախագծած ստորաբաժանման կողմից տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու տեսական թննության հարցերի թարգմանությունները զննելուց հետո պարզվել է, որ այն չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին, քանի որ այն չի կատարվել մասնագիտական (տեխնիկական) տերմինաբանությամբ, պարունակել է բովանդակային մի շարք թերություններ: «Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից հայցվել է մեկ հավելյալ օր թերությունները շտկելու համար և 22.12.2020թ. ներկայացվել է վերջնական շտկված տարբերակը: Վերջնական շտկված տարբերակի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թարգմանչական նյութերը պարունակում են վերը նշված բովանդակության համանման սխալներ, որի մասին տեղեկացվել է կատարողին:

<u>Մինչ օրս կատարողի կողմից ճանապարհային ոստիկանություն չի ներկայացվել գրավոր թարգմանչական նյութեր պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի համապատասխան և ընդունման-հանձման ակտը</u>:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և ***Պայմանագրի <u>2.1.2-րդ</u> կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի միջև 09.12.2020թ. կնքված Պայմանագիրը***»:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.2-րդ կետով սահմանվել է, որ ***Պատվիրատուն իրավունք ունի, եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.***

ա) չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը,

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.3-րդ կետով սահմանվել է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն Պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցման՝ Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է այն հիմքով, որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջին:

Մինչդեռ, հիմք ընդունելով Պայմանագրի 3-րդ կետով սահմանված ծառայության հանձնման և ընդունման կարգը, գտնում եմ, որ քանի դեռ Կատարողի կողմից Պայմանագրի 3.1-րդ ենթակետի համաձայն չի հանձնվել ծառայությունը, Պատվիրատուն

չէր կարող ուսումնասիրության առարկա դարձնել ծառայության համապատասխանությունը պայմանագրի պայմաններին և արձանագրել մատուցված ծառայության անհամապատասխանություն՝ պայմանագրի պայմանների նկատմամբ, և ըստ «Ալեքսիմ» ՍՊԸ-ին ուղղված 29.12.2020թ. թիվ 27/1459 գրության՝ տրամադրել մեկ օր՝ թարգմանություններում առկա թերությունները շտկելու համար, քանի որ Պայմանագրով սահմանված՝ Պատվիրատուի իրավունքները ծառայության ընդունման կամ չընդունման մասով առաջանում են միայն Պայմանագրի 3.1-րդ ենթակետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ուստի Պայմանագրի 2.1.2-րդ ենթակետի՝ եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն, հիմքով ՀՀ ոստիկանության կողմից Պայմանագրի միակողմանի լուծման պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուի գործողությունները, ուղղված Պայմանագրի միակողմանի լուծմանը, իրավաչափ չեն, քանի որ չեն բխում Կողմերի միջև կնքված Պայմանագրի դրույթներից:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ համաձայն գործում առկա նյութերի՝ հնարավոր չէ արձանագրել «Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից իր և ՀՀ ոստիկանության միջև 09.12.2020թ. կնքված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ» ծածկագրով պայմանագրի էականորեն խախտման փաստը, հետևաբար նաև՝ Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման հիմքը: Ուստի գտնում եմ, որ «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Միաժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել ***համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից***՝ 20 օր հետո 7 օրյա ժամկետում, ***բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.:***

Մինչդեռ արձանագրում եմ, որ Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև N 1 համաձայնագիրը ֆինանսական միջոցների հաստատման վերաբերյալ, կնքվել է ***21.12.2020թ.***:

Համաձայնագրի 1.2-րդ կետի համաձայն՝ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայության մատուցման ժամկետի վերաբերյալ վերոհիշյալ դրույթը՝ արձանագրում եմ, որ 21.12.2020թ. կնքված N 1 համաձայնագիրը կնքվել է Պայմանագրով նախատեսված դրույթների խախտմամբ՝ Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն ժամկետի, այն է՝ 20.12.2020թ., լրանալուց հետո:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ. թիվ 26/26-1/270-2021 գրությամբ «Ալեքսիմ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**